Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Հայ պատմական գիտությունը մեծ կորուստ կրեց: Մահը և երկարատև հիվանդությունից հետո կյանքից հեռացավ ականավոր գիտնական, պատմաբան, հայագետ, ակադեմիկոս Սուրեն Տիգրանի Երեմյանը:

Հայաստանի ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Տիգրանի Երեմյանը ծնվել է 1908 թ. ապրիլի 10-ին Թբիլիսիում, բանվորի ընտանիքում: Դեռևս պատանի հասակից ունեցած սերը և հետաքրքրությունը իր ժողովրդի պատմության և պատմական աշխարհագրության հանդեպ, ճրան բերեց հայրենիք: 1928 թ. նա ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: Ուսանողական և ասպիրանտական (1932—1935 թթ.) տարիներին նրա ուսուցիչներն են եղել ակադեմիկոսներ Հ. Մանանդյանը և Ն. Մառը: 1935 թ. Ս. Երեմյանը գործուղվում է Լենինգրադ՝ ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտ, որտեղ նա հաջողությամբ պաշտպանում է «Քարթլիի (Արևելյան Վրաստան) ֆեոդալական կազմավորումները մարզպանական շրջանում» թեմայով դիսերտացիան և ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այս տարիներին «ԽՍՀՄ պատմություն» բազմահատորյակի համար նա գրում է Հայաստանի և Աղվանքի քաղաքական պատմության բաժինը՝ հնագույն շրջանից մինչև XI դարը, որը երիտասարդ գիտնականին վստահված պատասխանատու, դժվարին գործ էր, և դրան կից ներկայացնում է նաև Հայաստանի ու Կովկասի պատմական քարտեզները:

Ս. Երեմյանի մանկավարժական գործունեությունը սկսվում է Լենինգրադում, որտեղ նա ժողովրդի պատմություն է դասավանդում պետական համալսարանի պատմության և բանասիրության ֆակուլտետներում:

ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի ստեղծումից հետո Ս. Երեմյանը տեղափոխվում է Երևան և իր կյանքն ընդմիշտ կապում Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ:

Ս. Երեմյանը 1953 թ. Մոսկվայում պաշտպանում է դոկտորական դիսերտացիան՝ «Հին Հայաստանի ստրկատիրական հասարակարգը» թեմայով: Նույն տարում նա ընտրվում է Հայաստանի ԳԱ թղթակից տեղամ և նշանակվում պատմության ինստիտուտի տնօրեն (1953—1959 թթ.): 1963 թ. ընտրվում է Հայաստանի ԳԱ ակադեմիկոս, 1965—1968 թթ. վարում է

Հայաստանի ԳԱ նախարարական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը: 1964 թ. նա ղեկավարել է պատմության ինստիտուտի միջին, իսկ 1971 թ.՝ նոր դարերի պատմության բաժինները: Վերջին տարում ինստիտուտի տնօրինության գիտական խորհրդատուն էր:

Մեծ է Սուրեն Երեմյանի ավանդը գիտական երիտասարդ կադրեր պատրաստելու գործում:

Հայագիտական փայլուն կրթությունը, հին ու նոր վրացերենի հիմնավոր իմացությունը, կովկասագիտական խոր գիտելիքները այն ամուր հիմքը հանդիսացան, որը հնարավորություն տվեց Ս. Երեմյանին իր բազմաթիվ մեծարժեք աշխատություններով ծանրակշիռ ներդրում կատարել հայ պատմագիտության, հին և միջին դարերի պատմության պրոբլեմների գիտական մշակման գործում: Նրա ակտիվ մասնակցությամբ է ստեղծվել «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակը: Ս. Երեմյանը պատմական գիտական քարտեզագրության հիմնադիրն էր Հայաստանում:

Ակադեմիկոսի, դարի մարդու և գործընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա մեր բոլորի սրտերում:

ՀՍՍՀ ԳԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ